ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՂՈՒԿԱՍՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ ԼԻՊԱՐԻՏԻ

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ, ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ

ԺԲ.00.03 - «Մասնավոր իրավունք՝ քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2019

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ГУКАСЯН ШУШАНИК ЛИПАРИТОВНА

ПРОБЛЕМЫ ВОЗМЕЩЕНИЯ ВРЕДА, ПРИЧИНЕННОГО ВСЛЕДСТВИЕ НЕДОСТАТКОВ ТОВАРОВ, РАБОТ ИЛИ УСЛУГ ПО ГРАЖДАНСКОМУ ЗАКОНОДАТЕЛЬСТВУ РА

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.03 - “Частное право - гражданское, торговое (коммерческое); международное частное, семейное, трудовое право, право социального обеспечения”

ЕРЕВАН-2019

Ատենախոսության թեման հաստատվել է
Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Տ. Կ. Բարսեղյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ա. Մ. Հայկյանց**

իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **Դ. Մ. Սերոբյան**

Առաջատար կազմակերպություն՝ **Հայ-ռուսական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2019 թվականի հունիսի 24-ին, ժամը 14^{30}-ին ՀՀ ԲՈԿ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք.Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2019 թվականի մայիսի 8-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ իրավ. գիտ. թեկ. **Տ. Հ. Սուջյան**

Тема диссертации утверждена в
Ереванском государственном университете

Научный руководитель: доктор юридических наук, профессор **Т. К. Барсегян**

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор **А. М. Айкянц**

кандидат юридических наук, доцент **Д. М. Серобян**

Ведущая организация: **Российско-Армянский университет**

Защита диссертации состоится 24-ого июня 2019 г. в 14^{30} часов на заседании Специализированного совета ВАК 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г.Ереван, ул.Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки Ереванского государственного университета.

Автореферат разослан 8-ого мая 2019 года.

Ученый секретарь специализированного совета: кандидат юридических наук **Т. О. Суджян**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Ժամանակակից շուկայական տնտեսության արդյունավետության կարևորագույն նախադրյալներից է տնտեսական հարաբերությունների կարգավորման նոր, ճկուն մոտեցման որդեգրումը և ըստ այդմ արդյունավետ քաղաքականության իրականացումը: Սոցիալական շուկայական տնտեսության պայմաններում տնտեսական գործունեության ազատության, շուկայում ազատ մրցակցության ապահովման հետ միաժամանակ կարևորվում է սպառողների իրավունքների պաշտպանության արդյունավետ կառուցակարգերի ապահովման խնդիրը:

Շուկայական հարաբերությունների շարունակական զարգացումը և արմատավորումը զուգորդվում է ապրանքների, աշխատանքների և ծառայությունների (այսուհետ՝ նաև Ապրանք կամ Ապրանքներ) շրջանառության աճով, ինչն իր անմիջական ազդեցությունն է թողնում յուրաքանչյուր երկրի տնտեսության վրա: Մի կողմից Ապրանքների շրջանառության աճը, մյուս կողմից սպառողների իրավունքների պաշտպանությունը պահանջում են թե՛ օրենսդրական, թե՛ գործնական մակարդակում ապահովել շահերի հավասարակշռություն տնտեսվարող սուբյեկտների և սպառողների միջև, հաշվի առնելով այն, որ ֆիզիկական անձինք ապրանքաշրջանառության ներկայիս պայմաններում հանդես են գալիս որպես առավել խոցելի և «ոչ մասնագիտացված» սուբյեկտներ, ովքեր ապահովված չեն Ապրանքների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն ձեռք բերելու, դրանց անվտանգության ապահովման արդյունավետ միջոցներ ձեռնարկելու, հնարավոր ռիսկերից իրենց ապահովագրելու անհրաժեշտ գործիքակազմով:

Այս համատեքստում առավել կարևորվում է սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, Ապրանքների վերաբերյալ հավաստի և ամբողջական տեղեկատվության տրամադրումը, դրանց անվտանգության ապահովումը, պատշաճ որակի նկատմամբ վերահսկողությունը և Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի լիարժեք և արդյունավետ հատուցման երաշխիքների ապահովումը: Նշված խնդիրների կարևորությունը ընդգծվում է նաև սպառողների շահերի պաշտպանության, Ապրանքների որակի նկատմամբ վերահսկողության պահանջի՝ սահմանադրորեն ամրագրված լինելու հանգամանքով:

Պետք է նշել, որ Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման արդյունավետ մեխանիզմների սահմանման և ա-

պահովման, վնաս կրած անձի իրավունքների պատշաճ պաշտպանության կառուցակարգերի երաշխավորման տեսանկյունից խնդրահարույց ու հակասական է և՛ գործող օրենսդրությունը (մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը) և՛ ձևավորված դատական պրակտիկան: Մասնավորապես, գործող օրենսդրությամբ երաշխավորված չէ վնաս պատճառած և վնաս կրած անձի շահերի համաչափ հավասարակշռությունը, ապահովված չէ անհրաժեշտ որոշակիություն վնաս պատճառած անձի հակահրավական վարքագծի տեսակների տարանջատման, վնաս պատճառած անձանց պատասխանատվության դրսևորման առանձնահատկությունների տեսանկյունից, հստակեցված չեն նաև Ապրանքների թերությունների հետևանքով գույքին պատճառված վնասի հատուցման առանձնահատկությունները, ապահովված չեն վնասի հատուցման իրավունքի լիարժեք և արդյունավետ իրացման բոլոր անհրաժեշտ նախադրյալները:

Նշվածը, ի թիվս այլ պատճառների, նաև իրավական կարգավորման բացերի և թերությունների, իրավական անորոշության, դատական պրակտիկայում նյութական իրավունքի նորմերի սխալ կիրառման հետևանք է: Այս համատեքստում ևս Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման կառուցակարգերի ամրապնդումը, դրանց արդյունավետության բարձրացումը և այս ուղղությամբ գործուն երաշխիքների ամրագրումը առավել արդիական և կարևոր են: Վերը նշված խնդիրների կարևորությունը և դրանց լուծման անհրաժեշտությունը պայմանավորում են սույն հետազոտության արդիականությունը:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքը: Հայրենական իրավական գրականության շրջանակում Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման ինստիտուտին մանրամասն անդրադարձ չի կատարվել, չեն ուսումնասիրվել այս կապակցությամբ միջազգային իրավական զարգացման հիմնական միտումները, առկա հիմնախնդիրները վերլուծության չեն ենթարկվել ներպետական և միջազգային իրավական կարգավորման տեսանկյունից:

Հետազոտության տեսական հիմք են կազմել ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան տարբեր հեղինակների աշխատություններ, այդ թվում՝ Գ.Հ. Բեքմեզյանի, Տ.Կ. Բարսեղյանի, Ա.Ս. Մամինի, Գ.Ֆ. Շերշենևիչի, Դ.Ե. Բոգդանովի, Ե.Ա. Սուխանովի, Վ.Ա. Բելովի, Ռ.Վ. Խալինի, Օ.Ս. Իոֆեի, Ա.Ջ. Սանչեսի, Դ.Գ. Օուենի, Դ.Սավայայի, Դ.Վիլկինսոնի, Ե.Հոնդիուի, Լ.Ս. Մանի, Հ.Ս. Թաշների, Մ.Ռեյմանի, Մ.Վանդի, Մ.Քարս-Ֆրիսկի, Պ.Ռ. Ռոդրիգեսի, Ջ.Զեկոլի, Ռ.Դ. Շուստերի, Ռ.Հ. Դրեյֆուսի, Ս.Բելիյումերի, Վ.Բերի և բազմաթիվ այլ հեղինակների աշխատություններ:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտն են Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման կապակցությամբ առաջացող հարաբերությունները՝ արտապայմանագրային պատասխանատվության համատեքստում, իսկ առարկան՝ վնասի հատուցումը և դրա իրավական կարգավորման հիմնախնդիրները:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակը Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման տեսական և գործնական հիմնախնդիրների համալիր ուսումնասիրությունը և դրանց հետագա կատարելագործմանն ուղղված առաջարկներ ներկայացնելն է: Այդ նպատակի իրագործումը պահանջում է հետևյալ խնդիրների լուծումը՝

1) ուսումնասիրել և վեր հանել Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի դեպքում պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվության բնորոշ առանձնահատկությունները, հիմնական տարբերությունները.

2) վերլուծել և հստակեցնել տուժողի՝ պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվության միջև ընտրություն կատարելու հնարավորության (հայցերի մրցակցության) հարցը.

3) ուսումնասիրել Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի դեպքում արտապայմանագրային պատասխանատվության պայմանների հիմնախնդիրները և վնասի հատուցման հարաբերությունների վրա դրանց ազդեցությունը.

4) վերլուծել ապրանք վաճառողների և արտադրողների պատասխանատվության դրսևորման առանձնահատկությունները.

5) բացահայտել Ապրանքների թերությունների հետևանքով գույքին պատճառված վնասի հատուցման առանձնահատկությունները.

6) ներկայացնել և հիմնավորել Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման հարցերը կարգավորող օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկներ:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքը: Հետազոտության իրավական և փորձառական հիմքը կազմել են ՀՀ և այլ պետությունների իրավական ակտերը, միջազգային-իրավական փաստաթղթերը, դատական պրակտիկայի նյութերը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, Եվրոպական Միության Արդարադատության դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի, առաջին ատյանի ընդհանուր իրավասության և վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատական ակտերը, Վիճակագրական կոմիտեի տրամադրած տվյալները:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Հետազոտության ընթացքում կիրառվել են ինդուկցիայի, դեդուկցիայի, անալիզի, սինթեզի, իրավահամեմատական, համակարգակառուցվածքային, վիճակագրական և այլ մեթոդներ:

Հետազոտության գիտական նորույթը: Ատենախոսության գիտական նորույթը նրանում է, որ հայրենական իրավագիտության մեջ առաջին անգամ համակողմանի ուսումնասիրության և վերլուծության առարկա են դառնում Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման տեսական և գործնական հիմնախնդիրները: Տեսության մեջ արտահայտված կարծիքների, ՀՀ օրենսդրության, միջազգային իրավական կարգավորումների, արտասահմանյան երկրների օրենսդրության, դատական պրակտիկայի համակարգային վերլուծության հիման վրա առաջին անգամ գիտական մակարդակով քննարկման առարկա է դառնում և համակողմանի վերլուծվում Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի դեպքում պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվության հարաբերակցության, արտապայմանագրային պատասխանատվության պայմանների, վնաս պատճառած անձի պատասխանատվության դրսևորման առանձնահատկությունների, պատասխանատվությունից ազատվելու հիմքերի, գույքին պատճառված վնասի հատուցման առանձնահատկությունների և այլ հիմնախնդիրները: Նշվածի արդյունքում կատարվել են ինչպես տեսական եզրահանգումներ, այնպես էլ օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկներ:

Ատենախոսության գիտական նորույթն արտացոլված է պաշտպանության ներկայացվող դրույթներում և ատենախոսության եզրակացության մեջ կատարված տեսական ընդհանրացումներում և գիտագործնական բնույթի առաջարկություններում:

Պաշտպանության ներկայացվող դրույթները:

1. Վերլուծելով պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվության առանձնահատկությունները՝ հիմնավորվել է, որ ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) թերությունների հետևանքով պատճառված վնասի դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, որպես ընդհանուր կանոնից բացառություն, թույլատրվում է պայմանագրային և արտապայմանագրային հայցերի մրցակցություն: «Հայցերի մրցակցություն» թույլատրելու իրավական հնարավորությունը պայմանավորված է պաշտպանվող օբյեկտներին վնաս պատճառելու դեպքում պաշտպանվածության ավելի բարձր աստիճան ապահովելու և վնասի հատուցման ամբողջական ծավալով իրականացումն ապահովելու անհրաժեշ-

տությամբ:

Կարևորելով վնասի հատուցման հարաբերություններում խախտված իրավունքների վերականգնման ապահովման սկզբունքի կենսագործման անհրաժեշտությունը, հիմնավորվել է, որ վնաս պատճառողի և տուժողի պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվելու պարագայում անձի կյանքին, առողջությանը կամ գույքին վնաս պատճառելու դեպքում պայմանագրային պատասխանատվություն սահմանող նորմերով վնասի հատուցում պահանջելու հնարավորությունը անհրաժեշտ է պայմանավորել պայմանագրով պատասխանատվության ավելի բարձր չափ ամրագրված լինելու հանգամանքով:

2. Օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի վերլուծության հիման վրա վերհանվել է վնաս պատճառած անձի հակահիրավական վարքագծի ճիշտ իրավաբանական որակման և դրսևորվող վարքագծի տեսակների հստակ տարանջատման խնդիրը, որը պայմանավորված է օրենսդրի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասում և 1089-րդ հոդվածի 3-րդ մասում միևնույն հակահիրավական վարքագծի բնորոշման համար տարբեր եզրույթների օգտագործմամբ:

Մասնավորապես, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) մասին ոչ բավականաչափ ճշգրիտ տեղեկատվության տրամադրումը չի կարող նույնանալ լիակատար տեղեկատվություն չտրամադրելու հետ, քանի որ վերջիններս միմյանցից տարբերվում են բովանդակային առումով, իսկ «ոչ ճիշտ», «ոչ բավականաչափ ճշգրիտ», «լիակատար տեղեկատվություն» եզրույթները, լինելով գնահատողական բնույթի կատեգորիաներ, կարող են հանգեցնել նույն իրավիճակում գտնվող սուբյեկտների կողմից դրսևորվող վարքագծի որակման դեպքում տարբերակվող վերաբերմունքի դրսևորման և կամայական մոտեցման վտանգի:

Օրենքի կանխատեսելիության, որոշակիության և հստակության սկզբունքի երաշխավորման նպատակով առաջարկվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին և 1089-րդ հոդվածի 3-րդ մասերում, որպես վնաս պատճառած անձի հակահիրավական վարքագծի տեսակ, առանձնացնել ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) վերաբերյալ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկություններ տրամադրելը:

3. ՀՀ քաղաքացիական օրենսգրքով ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) թերությունների հետևանքով վնաս պատճառելու դեպքում իրավաբանական անձանց ֆիզիկական անձանց հետ համահունչ արտապայմանագրային պատասխանատվություն սահմանող նույն կանոննե-

րով վնասի հատուցում պահանջելու հնարավորություն ընձեռելու հիմնավորվածության հարցը անհրաժեշտ է դիտարկել նաև իրավաբանական անձին՝ որպես քաղաքացիական իրավունքի առանձնահատուկ սուբյեկտին բնորոշ հատկանիշների համատեքստում, որոնց վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգել, որ իրավաբանական անձը ապրանքային շուկայում առավել մասնագիտացված և պաշտպանված է:

Ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) թերությունների հետևանքով իրավաբանական անձի գույքին վնաս պատճառելու դեպքում վերջինիս ֆիզիկական անձի հետ համահունչ նույն կանոններով վնասի հատուցում պահանջելու հնարավորություն վերապահելը չի բխում նաև այս հարցի կապակցությամբ միջազգային իրավական զարգացման հիմնական միտումներից, ուստի, առաջարկվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասով վնասի հատուցում պահանջելու իրավական հնարավորություն ընձեռել միայն ֆիզիկական անձանց, իսկ իրավաբանական անձի գույքին արտապայմանագրային հարաբերությունների շրջանակում վնաս պատճառելու դեպքում դրա հատուցումը իրականացնել արտապայմանագրային պատասխանատվության դեպքում վնասի հատուցման հարցերը կարգավորող ընդհանուր դրույթների հիման վրա:

4. Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի համար ապրանք վաճառողը և արտադրողը, ինչպես նաև ապրանք արտադրողները կարող են կրել համապարտ պատասխանատվություն այն դեպքում, եթե տուժողին վնաս պատճառվի ապրանք վաճառողի և արտադրողի կամ ապրանք արտադրողների կողմից համատեղ: Քաղաքացիական օրենսդրությամբ չեն առանձնացվում այն հիմնական չափանիշները, որոնք կարող են հիմք ծառայել վնասը որպես համատեղ պատճառած որակելու համար: Այս խնդիրը իր լուծումը չի ստացել նաև դատական պրակտիկայում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկել ենք, որ ապրանք վաճառողին և արտադրողին (կամ ապրանք արտադրողներին) համատեղ վնաս պատճառելու դեպքում համապարտ պատասխանատվության ենթարկելու համար հաշվի առնվի հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությունը՝

1) վնասի պատճառմանը հանգեցնող հակահրավական գործողության անմիջական կատարումը և՛ ապրանք վաճառողի և՛ արտադրողի կամ ապրանք արտադրողների կողմից՝ անկախ այդ գործողությունների համաձայնեցված, նույնաբնույթ լինելու կամ միաժամանակյա ձեռնարկման հանգամանքից.

2) ապրանք վաճառողի և արտադրողի կամ ապրանք արտադրողների համատեղ մասնակցությունը նույն վնասի պատճառմանը՝ անկախ յուրաքանչյուրի մասնակցության աստիճանից:

5. Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի դեպքում վնասի հատուցման իրավունքի լիարժեք և արդյունավետ կենսագործման գրավականներից կարևորագույնը տուժողի և վնաս պատճառողի միջև ապացուցման բեռի համաչափ բաշխվածության և ըստ այդմ վերջիններիս շահերի արդարացի հավասարակշռության ապահովումն է: Տուժողի և վնաս պատճառողի շահերի պատշաճ հավասարակշռության ապահովման, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արձանագրած՝ դատավարությունում կողմերի միջև «արդարացի հավասարակշռության» իմաստով իրավահավասարության սկզբունքի երաշխավորման տեսանկյունից խնդրահարույց է ապրանքների արտադրական թերությունների առկայության ապացուցման պարտականությունը տուժողի վրա դնելը՝ (հաշվի չառնելով դրանց առանձնահատուկ բնույթը), քանի որ տուժողին ապացուցման տեսանկյունից նման պահանջ առաջադրելը վնաս պատճառողի համեմատ վերջինիս դնում է նվազ բարենպաստ պայմանում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվել է ապրանքների արտադրական թերությունների դեպքում, որպես ապացուցման պարտականությունը բաշխելու հատուկ կանոն, վնաս պատճառողի վրա դնել դրանց բացակայությունն ապացուցելու պարտականությունը, քանի որ սպառողը, մասնակից չլինելով ապրանքների արտադրության, պատրաստման գործընթացին, զրկված է դրա պատճառով առաջացած թերությունները հավաստող ապացույցներ ներկայացնելու հնարավորությունից, իսկ արտադրողը, հանդիսանալով արտադրության պրոցեսի նկատմամբ վերահսկողության իրականացման անմիջական պատասխանատուն, տիրապետում է ապրանքների արտադրական թերությունների բացակայությունը ապացուցելու անհրաժեշտ գործիքակազմի:

6. Կատարված ուսումնասիրությամբ հիմնավորվել է, որ միայն թերություն ունեցող ապրանքի (աշխատանքի, ծառայության) առկայությունը (ձեռքբերումը) չի կարող հիմք հանդիսանալ արտապայմանագրային պատասխանատվության կանոններով գույքին պատճառված վնասի հատուցում պահանջելու համար, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասում օգտագործվող «գույքին պատճառված վնաս» հասկացությունը պետք է բացառապես մեկնաբանվի որպես ձեռք բերված ապրանքի (աշխատանքի, ծառայության) թերության հետևանքով անձին պատկանող այլ գույքին պատճառված վնաս:

Նշված եզրահանգումը պայմանավորված է նրանով, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված «գույքին պատճառված վնաս» արտահայտությունը պետք է դիտարկվի արտապայմանագրային պատասխանատվության պայմանների՝ մասնավորապես հակաիրավական վարքագծի, վնասի և դրանց միջև անհրաժեշտ պատճառահետևանքային կապի առկայության ողջամիտ տրամաբանության պահպանման տեսանկյունից: Հակառակ պարագայում թերություն ունեցող ապրանքի (աշխատանքի, ծառայության) առկայությունը որպես գույքին պատճառված վնաս որակելը կհանգեցնի արտապայմանագրային պատասխանատվության պայմաններից՝ հակաիրավական վարքագծի, դրա հետևանքով պատճառված վնասի նույնացմանը և պատճառահետևանքային կապի բացակայության պայմաններում վնասի հատուցում տրամադրելու հնարավորությանը:

7. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման հարցերի կարգավորմանն ուղղված դրույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ վնասի հատուցման կանոնների կիրառումը պայմանավորված է ապրանքի (աշխատանքի, ծառայության) որոշակի նպատակային նշանակությամբ ձեռք բերման և օգտագործման հանգամանքով:

Հաշվի առնելով այն, որ ապրանքի նպատակային նշանակությամբ օգտագործումը ենթադրում է այն միջավայրի (գույքի) կարգավիճակի առանձնահատկություն, որտեղ այն տեղադրվել կամ որում օգտագործվում է, հիմնավորվել է, որ ապրանքների թերությունների հետևանքով գույքին պատճառված վնասը կարող է հատուցվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 60-րդ գլխի 3-րդ պարագրաֆի դրույթների հիման վրա այն դեպքում, երբ վնաս է պատճառվել այն գույքին, որը անմիջականորեն կապված չէ անձի մասնագիտական կամ ձեռնարկատիրական գործունեության հետ:

Հակառակ պարագայում, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 60-րդ գլխի 3-րդ պարագրաֆի դրույթների հիման վրա ցանկացած գույքին պատճառված վնասի հատուցում թույլատրելը կարող է հանգեցնել ապրանք վաճառողների (արտադրողների) անսահմանափակ, անկանխատեսելի պատասխանատվության:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտության տեսական նշանակությունը նրանում է, որ ատենախոսությունում առկա վերլուծությունները, եզրահանգումները, առաջարկները կարևոր նշանակություն կարող են ունենալ քաղաքացիական իրավունքի գիտության զարգացման համար: Ատենախոսությունը կարող է օգտագործ-

վել քաղաքացիագետների, թեմայով հետաքրքրված իրավունքի այլ ճյուղերի մասնագետների, պրակտիկ աշխատողների կողմից: Ատենախոսությունում առկա առաջարկները, վերլուծությունները կարող են օգտագործվել իրավաստեղծ գործունեության ոլորտում, կարող են դրական ազդել նաև իրավակիրառ ճիշտ պրակտիկա ձևավորելու վրա:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը պատրաստվել է Երևանի պետական համալսարանի քաղաքացիական իրավունքի ամբիոնում: Հետազոտության արդյունքներն ամփոփված են հեղինակի գիտական հոդվածներում, որոնք հրապարակվել են գիտական ամսագրերում և ժողովածուներում: Ատենախոսության մի շարք դրույթներ հեղինակի կողմից ներկայացվել են գիտական զեկույցների շրջանակներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, դրանցում ամփոփված յոթ պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված իրավական ակտերի, գրականության և պրակտիկայի նյութերի ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության մշակվածության աստիճանը և տեսական հիմքերը, նպատակը և խնդիրները, օբյեկտը, առարկան, հետազոտության իրավական, փորձառական, մեթոդոլոգիական հիմքերը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների փորձարկումը և դրա կառուցվածքը:

Առաջին գլուխը՝ *«Ապրանքների, աշխատանքների, ծառայությունների թերությունների հետևանքով պատճառված վնասի համար արտապայմանագրային պատասխանատվության ընդհանուր բնութագիրը»* վերտառությամբ, բաղկացած է երեք պարագրաֆից:

Առաջին գլխի առաջին պարագրաֆում՝ *«Պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվության հարաբերակցությունը՝ ապրանքների, աշխատանքների, ծառայությունների թերությունների հետևանքով պատճառված վնասի դեպքում»* վերտառությամբ, ուսումնասիրվել են Ապրանքների թերությունների հետևանքով վնաս պատճառելու դեպքում պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվության առանձնահատկությունները, վեր են հանվել դրանց հիմնական տարբերութ-

յունները, վերլուծվել է հայցերի մրցակցության հիմնախնդիրը:

Առաջին գլխի երկրորդ պարագրաֆում՝ *«Արտապայմանագրային պատասխանատվության պայմանները՝ ապրանքների, աշխատանքների, ծառայությունների թերությունների հետևանքով պատճառված վնասի դեպքում»* վերտառությամբ, մանրամասն ուսումնասիրվել են վնաս պատճառողի գործողությունների հակահիրավականության և մեղքի հետ կապված հարցերը, հստակեցվել է վնաս պատճառած անձի հակահիրավական վարքագծի բնորոշումը, հիմնավորվել է առանց մեղքի պատասխանատվության նախատեսման առավել նպատակահարմարությունը:

Առաջին գլխի երրորդ պարագրաֆում՝ *««Ապրանք», «աշխատանք» և «ծառայություն» հասկացությունների իրավական բնորոշման հիմնահարցը»* վերտառությամբ, առանձնացվել են ապրանքին բնութագրական հատկանիշները, վերլուծվել է իրավաբանական անձանց ֆիզիկական անձանց հետ համահունչ արտապայմանագրային պատասխանատվություն սահմանող նույն կանոններով վնասի հատուցում պահանջելու հնարավորություն ընձեռելու հիմնավորվածության հարցը, անդրադարձ է կատարվել «ծառայություն» և «աշխատանք» հասկացությունների բնորոշման խնդրին:

Երկրորդ գլուխը՝ *«Ապրանքների, աշխատանքների, ծառայությունների թերությունների հետևանքով պատճառված վնասի համար պատասխանատվություն կրող անձինք և պատասխանատվությունից ազատվելու հիմքերը»* վերտառությամբ, բաղկացած է երկու պարագրաֆից:

Երկրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ *«Ապրանք արտադրողը և վաճառողը՝ որպես ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի համար պատասխանատու սուբյեկտներ»* վերտառությամբ, հանգամանալից քննարկվել է պատճառված վնասի համար պատասխանատու սուբյեկտների միջև ընտրություն կատարելու և վերջիններիս տարանջատելու հարցը, առանձնացվել են այն հիմնական չափանիշները, որոնք կարող են հիմք ծառայել վնասը որպես համատեղ պատճառած որակելու համար:

Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ *«Պատասխանատվությունից ազատվելու հիմքերը»* վերտառությամբ, կատարվել է անհաղթահարելի ուժի, Ապրանքների օգտագործման, պահպանման կանոնների խախտում թույլ տալու դեպքում վնաս պատճառած անձի պատասխանատվությունից ազատվելու հարցի, վնասի հատուցման գործերով ապացուցման բեռի հիմնահարցի վերլուծություն, ներկայացվել է «Զարգացման ռիսկեր» դոկտրինը:

Երրորդ գլուխը՝ *«Ապրանքների, աշխատանքների, ծառայությունների*

թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման առանձնահատկությունները» վերտառությամբ, բաղկացած է երկու պարագրաֆից:

Երրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ *«Ապրանքների, աշխատանքների, ծառայությունների թերությունների հետևանքով գույքին պատճառված վնասի հատուցումը»* վերտառությամբ, ուսումնասիրվել և ներկայացվել են Ապրանքների թերությունների հետևանքով գույքին պատճառված վնասի հատուցման առանձնահատկությունները:

Երրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ *«Բաց թողնված օգուտի հատուցումը ապրանքների, աշխատանքների, ծառայությունների թերությունների հետևանքով գույքին վնաս պատճառելու դեպքում»* վերտառությամբ, ուսումնասիրվել է գույքին վնաս պատճառելու դեպքում բաց թողնված օգուտի հատուցման խնդիրը, ներկայացվել է «Պատժիչ վնաս»-ի դոկտրինը, քննարկվել է ՀՀ օրենսդրությամբ պատժիչ վնասի հատուցման հնարավորության նախատեսման հարցը:

Ատենախոսության եզրակացությունում ներկայացվել են հետևյալ հիմնական առաջարկությունները և եզրահանգումները.

1. Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի դեպքում արտապայմանագրային պատասխանատվությանը բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները՝

1) տուժողը արտապայմանագրային պատասխանատվություն սահմանող նորմերով հատուցման պահանջ ներկայացնելու իրավական հնարավորություն ունի ինչպես վնաս պատճառողի հետ պայմանագրային հարաբերությունների մեջ չգտնվելու, այնպես էլ այն դեպքում, երբ վերջիններս գտնվել են պայմանագրային հարաբերությունների մեջ.

2) արտապայմանագրային պատասխանատվություն սահմանող նորմերով հատուցման պահանջ ներկայացնելիս որպես տուժող կարող են հանդես գալ ոչ միայն անմիջականորեն Ապրանքների ձեռքբերման մտադրություն ունեցող սուբյեկտները, այլև երրորդ անձինք, որոնց վնաս է պատճառվել այլ անձի ձեռք բերած Ապրանքների թերությունների արդյունքում.

3) արտապայմանագրային պատասխանատվություն սահմանող նորմերով հատուցման պահանջ ներկայացնելու դեպքում պատասխանատվությունը վրա է հասնում առանց մեղքի (վնաս պատճառած անձի «առավել խստացված» պատասխանատվություն).

4) արտապայմանագրային պատասխանատվության դեպքում բացառվում է առանց տուժողի համաձայնության պատասխանատվության ծավալի որևէ փոփոխության հնարավորություն:

Նշվածը վկայում է այն մասին, որ, որպես կանոն, Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի դեպքում արտապայմանագրային պատասխանատվության կանոններով վնասի հատուցման իրավունքի իրացումը առավել արդյունավետ է, իսկ ամբողջական ծավալով վնասի հատուցման ապահովումը՝ առավել կանխատեսելի և իրատեսական:

2. Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման հարաբերությունների շրջանակում ապրանքներին բնութագրական հիմնական հատկանիշների առանձնացումը կարող է ուղենիշ ծառայել այս կամ այն իրի՝ «ապրանք» հասկացության ներքո ներառելու հարցի քննարկման և վնասի հատուցման խնդրի լուծման ժամանակ: Ապրանքներին բնորոշ հատկանիշները կարելի է դասակարգել երկու հիմնական խմբի՝ պարտադիր հատկանիշներ, լրացուցիչ կամ ֆակուլտատիվ հատկանիշներ: Պարտադիր հատկանիշների շարքում անհրաժեշտ է առանձնացնել ապրանքի՝ սպառողական նպատակով արտադրված կամ իրացված լինելը, անձի կյանքին, առողջությանը կամ գույքին վնաս պատճառելու կարողությունը (հատկությունը): Լրացուցիչ (ոչ պարտադիր) հատկանիշների շարքին կարող են դասվել ապրանքի՝ արտադրված, արդյունաբերական մշակման փուլն անցած լինելը կամ ընդհանուր առմամբ մշակված, վերամշակված լինելը, կայուն բնույթ ունենալը՝ վաճառողի կամ արտադրողի հսկողությունից դուրս գալուց հետո, շարժունակությունը:

3. Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի դեպքում տուժողին ապրանք վաճառողի և արտադրողի միջև ընտրություն կատարելու հնարավորություն ընձեռելը մասնագիտական գրականության մեջ որակվել է որպես ապրանք վաճառողի և արտադրողի համապարտ պատասխանատվություն: Մեր կարծիքով, նման մոտեցումը հիմնավոր չէ, և խնդրահարույց է ինչպես համապարտ պատասխանատվության նախատեսման գաղափարի, այնպես էլ արտապայմանագրային պատասխանատվության պայմանների տեսանկյունից: Կարծում ենք՝ օրենսդրորեն ապրանք վաճառողի և արտադրողի միջև տուժողին ընտրություն կատարելու հնարավորություն ընձեռելը պայմանավորված է նրանով, որ ապրանքաշրջանառության բարդ շղթային բնորոշ կապուղիների բազմազանությամբ պայմանավորված ապրանքների մեծամասնությունը սպառողին հասնում է միջնորդավորված ձևով, և վերջինիս հնարավորություն է ընձեռվում նախնական գնահատելով ապրանքի թերության, պատճառված վնասի բնույթը, ապրանք վաճառողի, իսկ արտադրողի հետ անմիջականորեն առնչվելու դեպքում՝ նաև վերջինիս վարքագիծը, ընտրություն կատարել,

թե ում դեմ վնասի հատուցման պահանջ ներկայացնելու պարագայում կապահովվի իր պահանջների առաջնահերթ և ամբողջական բավարարումը: Տուժողին վերապահված ընտրության իրավունքի իրացման արդյունքում ապրանք վաճառողի (կամ հակառակը) դեմ ներկայացված վնասի հատուցման պահանջի մերժումը չի զրկում տուժողին հետագայում ապրանք արտադրողի դեմ նման պահանջ ներկայացնելու հնարավորությունից:

4. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1089-րդ հոդվածի 1-ին մասի «վաճառող» և «արտադրող» եզրույթները ընդգրկում են միայն ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող սուբյեկտներին: Նման եզրահանգումը պայմանավորված է նրանով, որ անձնական կամ համանման այլ օգտագործման համար նախատեսված ապրանքները սովորաբար արտադրվում կամ վաճառվում են ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող սուբյեկտների կողմից, «արտադրող» տերմինի օգտագործումը արդեն իսկ վկայում է, որ իրականացվող գործունեությանը բնորոշ է պարբերական բնույթը, իսկ վնաս պատճառած անձի՝ առավել խստացված (առանց մեղքի) պատասխանատվության նախատեսումը ևս հուշում է, որ նման պատասխանատվությունը առավելապես բնորոշ է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող սուբյեկտին:

5. Արտասահմանյան երկրների իրավական համակարգերին բնորոշ այն մոտեցման հիմնավորվածությունը, որի համաձայն տուժողը ի սկզբանե վնասի հատուցման պահանջը ներկայացնում է արտադրողին և միայն վերջինիս անձը անհայտ լինելու դեպքում՝ վաճառողին, մեր կարծիքով անհրաժեշտ է դիտարկել ոչ միայն իրավական, այլև տնտեսական հարթությունում՝ հաշվի առնելով տվյալ երկրի ներքին և արտաքին շուկայի առանձնահատկությունները, ներմուծման և արտահանման ընդհանուր ծավալը:

Հաշվի առնելով ՀՀ շուկայի առանձնահատկությունները, այն, որ ապրանքների ներմուծման ծավալը գերազանցում է արտահանման ընդհանուր ծավալը, և ՀՀ ներքին շուկա ապրանքները մեծամասամբ ներմուծվում են այլ երկրներից, գտնում ենք, որ ՀՀ օրենսդրությամբ արտադրողին պահանջ ներկայացնելու առաջնահերթության պահանջ ամրագրելը հիմնավոր չէ: Այսինքն՝ տուժողին իր իսկ ընտրությամբ արտադրողին կամ վաճառողին պահանջ ներկայացնելու հնարավորություն ընձեռելու ներկայիս մոտեցումը առավել արդարացի է և հիմնավոր:

6. Ապրանքների թերությունների հետևանքով համատեղ վնաս պատճառելու դեպքում համապարտ պատասխանատվությունը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1073-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա չի կարող

փոխարինվել բաժնային պատասխանատվությամբ տուժողի դիմումի հիման վրա և հօգուտ նրա, ինչը բացատրվում է նրանով, որ համատեղ վնաս պատճառած անձանց բաժնային պատասխանատվության դեպքում առաջադրվում է վնաս պատճառողների մեղքի աստիճանը որոշելու պահանջ (մեղքի աստիճանը որոշելու անհնարինության դեպքում բաժինների հավասարության ճանաչման պահանջ), մինչդեռ այս պարագայում արտապայմանագրային պատասխանատվությունը վրա է հասնում առանց մեղքի: Քաղաքացիական օրենսդրությամբ առանց մեղքի պատասխանատվության նախատեսումը պայմանավորված է տուժողի շահերի համապարփակ պաշտպանությունն ապահովելու անհրաժեշտությամբ, ինչից տրամաբանորեն բխում է, որ վնասը համատեղ պատճառելու դեպքում ևս օրենսդրական կարգավորումները պետք է ուղղված լինեն այդ նպատակի իրացմանը, ինչը կարող է ապահովվել համապարտ, այլ ոչ թե բաժնային պատասխանատվության նախատեսման միջոցով:

7. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1076-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունը, որպես վնասի հատուցման հարցերի կարգավորմանն ուղղված ընդհանուր դրույթ, կարող է կիրառվել նաև Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի դեպքում տուժողի գործողություններում կոպիտ անզգուշության պարագայում վնասի հատուցման մերժման կամ դրա չափի նվազեցման համար:

8. Հաշվի առնելով այն, որ սպառողի կողմից Ապրանքի փոխադրման կանոնների խախտումը ևս կարող է հանգեցնել Ապրանքի թերության ի հայտ գալուն, առաջարկվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1091-րդ հոդվածում վնաս պատճառողին պատասխանատվությունից ազատվելու հնարավորություն ընձեռել ոչ միայն Ապրանքների օգտագործման կամ պահպանման կանոնների խախտման դեպքում, այլ նաև տուժողի կողմից Ապրանքների փոխադրման կանոնների խախտման պարագայում:

9. Անձի գույքին վնաս պատճառելու դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 60-րդ գլխի 3-րդ պարագրաֆի դրույթներով ևս հնարավոր է իրական վնասից զատ պահանջել նաև բաց թողնված օգուտի հատուցում: Բաց թողնված օգուտի հատուցման պահանջ կարող է ներկայացվել այն պարագայում, երբ բաց թողնված օգուտն առաջացել է այն գույքին վնաս պատճառելու արդյունքում, որը նախատեսված է եղել մասնավոր (անձնական) օգտագործման համար:

10. Վնասների հատուցման հիմնական ֆունկցիան ոչ միայն պետք է դիտարկվի բացառապես փոխհատուցման, այլև կանխարգելիչ, պատժիչ գործառույթների արդյունավետ իրացման տեսանկյունից: Սա պայմանա-

վորված է այն իրողությամբ, որ հասարակական հարաբերությունների զարգացման յուրաքանչյուր փուլում ներգործության միջոցների համակարգը պետք է վերանայվի, որպեսզի համարժեք լինի պաշտպանվող շահի էությանը, կատարված իրավախախտման բնույթին, դրա վտանգավորությանը: Գտնում ենք, որ Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի դեպքում քաղաքացիական օրենսդրությամբ պատժիչ վնասի հատուցման հնարավորության նախատեսումը լուրջ դերակատարում կարող է ունենալ ոչ միայն վնաս պատճառողին պատժելու և ապագայում համանման դեպքերը վերջինիս և այլ անձանց կողմից կանխելու, այլև քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցների իրավաչափ վարքագծի խթանման, հանրային իրավական շահերի պահպանության տեսանկյունից: Պատժիչ վնասի հատուցման հնարավորությունը տուժողի շահերի պաշտպանությունը կդարձնի առավել ռեալ, կնպաստի Ապրանքների պատշաճ որակի և անվտանգության ապահովմանը, լուրջ խթան կհանդիսանա սպառողների իրավունքների հասարակական պաշտպանության մեխանիզմների կատարելագործման համար:

Գտնում ենք, որ պատժիչ վնասի հատուցման հնարավորություն անհրաժեշտ է նախատեսել որոշակի սահմանափակ դեպքերում, որպեսզի ապահովվի նաև դրա կիրառմամբ հետապնդվող նպատակի իրավաչափությունը և համարժեքությունը: Մասնավորապես, նման հնարավորություն պետք է նախատեսվի այն դեպքում, երբ պարզվել է, որ չնայած այն հանգամանքին, որ Ապրանքը վնաս է պատճառել անձի կյանքին, առողջությանը կամ գույքին, վնաս պատճառողը անհապաղ չի դադարեցնել դրա արտադրությունը (իրացումը) կամ միջոցներ չի ձեռնարկել այն շրջանառությունից հանելու համար, որի արդյունքում վնաս է պատճառվել այլ անձանց կյանքին, առողջությանը կամ գույքին:

Ատենախոսության դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1) Ղուկասյան Շ. «Ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման առանձնահատկությունները՝ պայմանագրային և արտապայմանագրային իրավահարաբերությունների համատեքստում», ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2015 թվականի նստաշրջանի նյութերի ժողովածու, Եր., ԵՊՀ հրատ., 2016, էջեր 233-242:

2) Ղուկասյան Շ. «Ապրանքների, աշխատանքների և ծառայությունե-

րի թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման որոշ հարցերի շուրջ», Արդարադատություն, Եր., 2017, N 3 (38), էջեր 58-63:

3) Ղուկասյան Շ. ««Ապրանք», «աշխատանքների կատարում» և «ծառայությունների մատուցում» հասկացությունների իրավական բնորոշման հիմնահարցը՝ ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման ինստիտուտի համատեքստում», ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2016 թվականի նստաշրջանի նյութերի ժողովածու, Եր., ԵՊՀ հրատ., 2017, էջեր 197-212:

4) Ղուկասյան Շ. «Ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման՝ որպես առանց մեղքի պատասխանատվության ինստիտուտի զարգացումը ԵՄ-ում, ԱՄՆ-ում և համեմատական վերլուծությունը ՀՀ-ի հետ», Պետություն և իրավունք, Եր., 2017, N 1 (75), էջեր 57-63:

5) Ղուկասյան Շ. «Հակահիրավական վարքագծի դրսևորման առանձնահատկությունները ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերությունների հետևանքով վնաս պատճառելու դեպքում», Արդարադատություն, Եր., 2017, N 5 (40), էջեր 63-67:

6) Ղուկասյան Շ. «Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի համար պատասխանատվություն կրող անձինք», ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու, Եր., ԵՊՀ հրատ., 2018, N 1 (1), էջեր 177-192:

7) Ղուկասյան Շ. «Ապրանքների, աշխատանքների, ծառայությունների թերությունների հետևանքով գույքին պատճառված վնասի հատուցման առանձնահատկությունները», Արդարադատություն, Եր., 2018, N 3 (44), էջեր 6-12:

8) Ղուկասյան Շ. «Պատասխանատվությունից ազատվելու հիմքերը ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերությունների հետևանքով վնաս պատճառելու դեպքում», Օրինականություն, Եր., 2018, N 104, էջեր 38-43:

ГУКАСЯН ШУШАНИК ЛИПАРИТОВНА

ПРОБЛЕМЫ ВОЗМЕЩЕНИЯ ВРЕДА, ПРИЧИНЕННОГО ВСЛЕДСТВИЕ НЕДОСТАТКОВ ТОВАРОВ, РАБОТ ИЛИ УСЛУГ ПО ГРАЖДАНСКОМУ ЗАКОНОДАТЕЛЬСТВУ РА

РЕЗЮМЕ

Одной из важнейших предпосылок эффективности современной рыночной экономики является принятие нового, гибкого подхода к регулированию экономических отношений. В условиях социальной рыночной экономики одновременно со свободой экономической деятельности, обеспечения на рынке свободной конкуренции придается важность проблеме обеспечения эффективных механизмов защиты прав потребителей.

Преемственное развитие и укоренение рыночных отношений сочетаются с ростом оборота товаров, работ и услуг (далее-Товары), что имеет свое непосредственное влияние на экономику каждой страны. С одной стороны рост оборота Товаров, с другой стороны защита прав потребителей требуют как на законодательном, так и на практическом уровне обеспечить равновесие интересов между хозяйствующими субъектами и потребителями, учитывая то, что физические лица в нынешних условиях товарооборота выступают как более уязвимые и “не специализированные” субъекты, которые не обеспечены необходимым набором инструментов, чтобы получить необходимую информацию о Товарах, предпринять эффективные меры для обеспечения их безопасности, застраховать себя от возможных рисков.

В этом контексте больше важности придается предоставлению достоверной и полной информации о Товарах, обеспечению их безопасности, контролю над надлежащим качеством и обеспечению гарантий полноценного и эффективного возмещения вреда, причиненного вследствие недостатков Товаров.

Следует отметить, что с точки зрения установления и обеспечения эффективных механизмов возмещения вреда, причиненного вследствие недостатков Товаров, гарантирования механизмов надлежащей защиты прав потерпевшего, проблематичным и противоречивым является и действующее законодательство РА (в частности Гражданский кодекс РА), и сформированная судебная практика. В частности, действующим законодательством не гарантировано соразмерное равновесие интересов

причинителя вреда и потерпевшего, не обеспечена необходимая определенность с точки зрения разграничения видов противоправного поведения лица причинившего вред, особенностей проявления ответственности лиц причинивших вред. Кроме того, не пояснены особенности возмещения вреда, причиненного имуществу вследствие недостатков Товаров, не обеспечены все необходимые предпосылки полноценной и эффективной реализации права на возмещение вреда.

Важность вышеуказанных проблем и необходимость их решения обусловливают актуальность настоящего исследования.

В рамках диссертации автор на основании системного анализа выраженных в теории мнений, законодательства РА, международных правовых регулирований, законодательства зарубежных стран, судебной практики впервые в отечественной юриспруденции делает предметом обсуждения и всесторонне анализирует проблемы соотношения договорной и внедоговорной ответственности в случае причинения вреда вследствие недостатков Товаров, условий внедоговорной ответственности, особенностей проявления ответственности причинителя вреда, оснований освобождения от ответственности, особенностей возмещения причиненного имуществу вреда и прочие проблемы.

В результате указанного были сделаны как теоретические обобщения, так и предложение научно-практического характера. Диссертация имеет не только теоретическое, но и практическое значение, так как имеющиеся в диссертации предложения, анализы могут быть использованы для усовершенствования законодательства и правоприменительной практики.

SHUSHANIK LIPARIT GHUKASYAN

ISSUES OF THE COMPENSATION FOR A DAMAGE CAUSED BY THE SHORTCOMINGS OF THE PRODUCTS, WORKS OR SERVICES BY CIVIL LEGISLATION OF RA

SUMMARY

One of the most important prerequisites for the effectiveness of the modern market economy is the adoption of a new, flexible approach to the regulation of the economic relations. In the social market economy the issue of providing effective protection mechanisms for consumers' rights is highlighted simultaneously with the freedom of economic activity and the provision of free competition in the market.

Continuous development and rooting of market relations are accompanied by an increase in the turnover of products, works and services (hereinafter referred to as "Products"), which has its immediate effect on the economy of each country. On the one hand, the increase of the Products turnover and, on the other hand, the protection of consumer's rights requires the balance of interests between economic entities and consumers both on legislative and practical level, taking into consideration the fact that natural persons act as the most vulnerable and "non specialized" subjects in current commodity turnover who are not provided with the necessary tools for acquiring the necessary information on the Products, undertaking effective measures to ensure their safety, insuring themselves from possible risks.

In this context it is more important to provide accurate and complete information on the Products, provide their security, proper quality control, and safeguards for the full and effective compensation for the damage caused by the shortcomings of the Products. It should be noted that the existing legislation (in particular the Civil Code of RA) and the established judicial practice are problematic and contradictory in terms of defining and ensuring effective mechanisms for compensation of the damages caused by the shortcomings of Products, and in terms of guaranteeing mechanisms for the proper protection of the rights of the victim.

Particularly, the existing legislation does not guarantee the proportional balance of the interests between the person who caused the damage and the victim, it does not provide the necessary certainty in terms of the separation of the types of illicit behavior of the person who has caused the damage, the peculiarities of the liability of the persons who caused the damage. Besides, the

peculiarities of compensation for a damage caused to property by the shortcomings of Products are not specified, all necessary prerequisites for the full and effective realization of the right of compensation for the damage are not provided.

The importance of the indicated issues and the need to address them determine the relevance of this study.

In the scope of the dissertation, the author, for the first time in native jurisprudence, on the basis of the systematic analysis of the views expressed in the theory, the legislation of the Republic of Armenia, the international legal regulations, the legislation of foreign countries, judicial practice, makes the subject of discussion and comprehensively analyzes the correlation of contractual and non-contractual liability in case of damage caused by the shortcomings of the Products, conditions of non-contractual liability, peculiarities of manifestation of responsibility of the person who caused the damage, grounds of exemption from liability, peculiarities of compensation for property damage and other issues.

As a result, both theoretical generalizations and scientific-practical suggestions were made. The dissertation has not only theoretical but also practical significance as the suggestions and analyzes available in the dissertation can be used to improve the legislation and law enforcement practice.